



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

31.01.2018թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի  
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/04**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ)՝ քննելով «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 12.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/04 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 12.01.2018թ. խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Լվացքի ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 20.12.2017թ. Ընկերությունը հայտ է ներկայացրել:

Ընկերությունից բացի հայտեր են ներկայացրել նաև «Սոֆի Գրուպ» և «Վալս Գրուպ» ՍՊԸ-ները:

22.12.2017թ.-ին Ընկերությունը տեղեկացվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրության համաձայն՝ հայտ ներկայացրած մասնակից «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ կա անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի ներկայացրած տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի արժույթը լրացված է միայն բառերով, իսկ հայտի ապահովման գումարի արժույթը կողով լրացված չէ: Հրավերին կից վճարման պահանջագրի լրացման կարգի համաձայն՝ մասնակիցը նախապես լրացնում է հայտի ապահովման գումարի արժույթը բառերով և կողով: Հայաստանի Հանրապետության դրամի կողը համաձայն՝ ԻՍՈ4217 ստանդարտի՝ AMD է»:

22.12.2017թ. որոշման 7.1 կետի համաձայն՝ քանի որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջներով, մերժել է Ընկերության հայտը:

22.12.2017թ. որոշման համաձայն՝ գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն:

08.01.2018թ. Ընկերությունը տեղեկացվել է, որ 29.12.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին նիստի արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Միաժամանակ սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացույցային օր:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի առավել ցածր գնային առաջարկը ներկայացված է եղել Ընկերության կողմից:

*Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝*

Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի որոշումները, որով Ընկերության հայտը համարվել է չհամապատասխանող հրավերի պահանջներին միայն այն հիմքով, որ տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի արժույթը լրացվել է միայն բառերով առանց նշելու դրա կողը, չի կարող համարվել օրինական և իրավաչափ, քանի որ ակնհայտ է այն փաստը, որ մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի արժույթը հստակ նշվել է ՀՀ դրամ,

ինչպիսի հանգամանքը պարզապես տարընթերցման հնարավորություն չէր կարող պարունակել արժույթի վերաբերյալ, ըստ այդմ պարտադիր պահանջը կատարվել է: Բացի այդ, այն պարագայում երբ Ընկերության կողմից տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրի հայտի ապահովման 13-րդ կետում պահանջ կա նշելու գումարի արժույթը, իսկ միայն փակագծերի մեջ է նշված, որ այն պետք է լինի բառերով և կողով, ապա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով նման պահանջը իմպերատիվ է, այն պարտադիր բնույթ չի կարող ունենալ և արժույթի կողի նշված չլինելը չէր կարող Ընկերության հայտի մերժման հիմք հանդիսանալ: Լավագույն դեպքում գումարի արժույթի չնշելը կարող էր դիտվել միայն որպես վրիպակ կամ բացթողում և որևէ պարագայում հայտի մերժման հիմք չհանդիսանալ:

Ավելին, տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրի հայտի ապահովման 12-րդ կետի ընթերցումը, որտեղ նշվելիք գումարը պետք է արտահայտված լինի և թվերով և բառերով, որոնք բնականաբար ներառված չեն փակագծերում, քանի որ միայն թվերի նշումը առանց բառերի դեռևս բավարար չեն կարող համարվել դրա տարընթերցման հնարավորության տեսանկյունից:

*Ընկերությունը ներկայացված բողոքով խորհրդին խնդրել է՝*

«Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վլացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով 13.12.2017թ. կազմակերպված «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կայացված որոշումները փոփոխել և տվյալ ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին:

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով խորհրդի 17.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով խորհրդին հայտնած դիրքորոշումը:

## **2. «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

«Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 16.01.2018թ. թիվ 01/10-04 գրությամբ հայտնել է, որ «Վ.Ա. Ֆանարջանի անվան

ուտուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 2018 թվականի կարիքների համար վացքի ծառայությունների գնման նպատակով [www.armeps.am](http://www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն, «Վալս Գրուպ» ՍՊԸ-ն և «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն: Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2017 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 13:00-ին: Հայտերի բացման ժամանակ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտի ապահովման նպատակով ներկայացրած տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում նշված չէր հայտի ապահովման գումարի արժույթը կողով (Հայաստանի Հանրապետության դրամի կողը համաձայն՝ ԻՍՈ4217 ստանդարտի՝ AMD): Քանի որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հրավերի 1-ին մասի 8.2 կետի դրույթներով, մերժել է վերջինիս հայտը:

Պատվիրատուն հայտնել է, որ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը համապատասխանում է ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238 հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված հրավերի օրինակելի ձևին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Ընթացակարգի հրավերին կից վճարման պահանջագրի լրացման կարգի 13-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պարտադիր լրացնում է հայտի ապահովման գումարի արժույթը բառերով և կողով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային

առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտով ներկայացրած տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում գումարի արժույթը կոդով ենթակա էր պարտադիր լրացման և դա չլրացնելը դիտվում է որպես հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված հայտի ապահովում, ինչը և հիմք է հանդիսացել Ընկերության հայտի մերժման համար:

«Վ.Ա. Ֆանարջանի անվան ուտուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 17.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

### **3. ԳԲԽ-ԱՄ-2018/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2018/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուտուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 2018 թվականի կարիքների համար լվացքի ծառայությունների գնման նպատակով [www.armeps.am](http://www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով կամզկաերավել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն, «Վալս Գրուպ» ՍՊԸ-ն և «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2017թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով արձանագրել է, որ «Սոֆի Գրուպ» և «Վալս Գրուպ» ՍՊԸ-ները հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

3. Նույն արձանագրության նույն ենթակետով արձանագրվել է, որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտում կա անհամապատասխանություն գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Ընկերության կողմից

ներկայացված տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի արժույթը լրացված է միայն բառերով, իսկ հայտի ապահովման գումարի արժույթը կողով լրացված չէ: (Հայաստանի Հանրապետության դրամի կողը համաձայն՝ ԻՍՈ4217 ստանդարտի՝ AMD է):

4. Նույն արձանագրության 7-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գիանատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջներով, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. Նույն արձանագրության 9-րդ ենթակետով կայացված որոշմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ տեղը՝ «Վալս Գրուպ» ՍՊԸ-ն:

#### 4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Սելենա-Սերվիս» ՀԶ ՍՊԸ-ի 12.01.2018թ. բողոքը և Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուտուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 16.01.2018թ. թիվ 01/10-04 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (այսուհետ՝ Կարգ)՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են

գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: **Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:**

Այսպիսով, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուտուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լվացքի ծառայությունների գնման նպատակով [www.armeps.am](http://www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն:

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Հավելված 8-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, որին կից վճարման պահանջագրի «13-րդ» տողում արժույթը (բառերով և կողով) նշել է ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2017թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով արձանագրել է, որ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտում կա անհամապատասխանություն գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի

արժույթը լրացված է միայն բառերով, իսկ հայտի ապահովման գումարի արժույթը կողով լրացված չէ: (Հայաստանի Հանրապետության դրամի կողը համաձայն՝ ԻՍՈ4217 ստանդարտի՝ AMD է):

Նույն արձանագրության 7-րդ ենթակետով կայացված որոշմամբ՝ Ընթացակարգի գիանատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջներով, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 9-րդ ենթակետով կայացված որոշմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ տեղը՝ «Վալս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ամփոփելով վերագրյալ փաստերը, Խորհուրդն արձանագրում է հետևյալը՝

Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 13-րդ կետի համաձայն՝ **արժույթը (բառերով և կողով) պարտադիր լրացվում է վճարողի կողմից, մինչդեռ «Սելենա-Սերվիս» ՀԶ ՍՊԸ-ն** հայտով ներկայացրել է Հավելված 8-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, որին կից վճարման պահանջագրի «13-րդ» տողում **արժույթը (բառերով և կողով) նշել է ՀՀ դրամ:**

Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է, իսկ ISO կողը՝ AMD:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ոս» շաղկապով** բաժանված պայմաններով, **ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:**

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ **եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:



Այսինքն այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, **կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա մասնակցին չի տրվում հայտում առկա նշված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն, այլ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով նման հայտը ենթակա է մերժման:**

Այսպիսով, նման փաստական հանգամանքներում, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն մերժելով «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ, ուստի «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 12.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման  
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ